ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«19» սեպտեմբեր 2020թ.
No 138

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 14.04.2020 թվականի թիվ 4123968 ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ

ՀՀ վարչական դատարանում քննվում է թիվ ՎԴ/3340/05/20 վարչական գործն ըստ հայցի «Դավիթ Պետրոսյան» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 04705474/ ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 14.04.2020 թվականի թիվ 4123968 ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ:

Ակտի կայացման հիմքում դրվել է Ընկերության կողմից ՀՀ կառավարության 05.10.2017 թ. թիվ 1318-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման կանոնների 23-րդ կետի պահանջները խախտելու հանգամանքը: Խախտման փաստն արձանագրելուց հետո, մինչ 14.04.2020 թվականի թիվ 4123968 ակտի կայացումը՝ 10.03.2020 թվականին Ընկերության կողմից կատարվել են խախտումը վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ, այսինքն՝ նշված ամսաթվից սկսած տպագրվող բոլոր ՀԴՄ կտրոններում արտացոլված են ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը:

ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը 25.01.2019 թ. թիվ 6/12 որոշմամբ, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ նախագահը 18.06.2020 թ. թիվ 101 որոշմամբ նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործերով անվավեր են ճանաչել վիճարկվող ակտերը՝ նկատի ունենալով, որ ՀԴՄ մուտքագրված գումարներն արտացոլվել են Ընկերությունների ֆիսկալային հասույթում, ինչպես նաև

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

գնումից հետո Ընկերությունների կողմից կատարվել են համապատասխան գործողություններ, ինչի արդյունքում տրամադրվող ՀԴՄ կտրոններում արտացոլվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր վավերապայմանները:

Հիմք ընդունելով նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործերով ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի որոշումները, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ նախագահի 18.06.2020 թ. թիվ 101 որոշումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետով, 2-րդ մասով, 67-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել թիվ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 14.04.2020 թվականի թիվ 4123968 ակտը:
2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատիրոջը իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում:

Recoverable Signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am